ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

8 հուլիսի 2020թ. **N 24-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանի 2020 թվականի հունիսի 22-ի ԱԺԽ.3/4416-2020 դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումում նշված է. «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 09-ի արտահերթ ընտրությունների արդյունքում՝ խորհրդարան են անցել և մանդատների բաշխմանը մասնակցել հետևյալ 3 քաղաքական ուժերը՝

- «Իմ քայլը» դաշինք,
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն,
- «Լուսավոր Հայաստան» կուսակցություն:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ «Ընտրական օրենսգիրք») 95-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկած քվեաթերթիկների թվին համամասնորեն: Յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է 101-ով, արդյունքը բաժանվում է արգելապատնեշը հաղթահարած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկած քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հասանելիք մանդատների թվերն են:

Արտահերթ ընտրությունների արդյունքով «Իմ քայլը» դաշինքն ստացել է Ազգային ժողովի մանդատների ընդհանուր թվի ավելի քան 2/3-ը, հետևաբար առաջացել է Ընտրական օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման անհրաժեշտությունը: Վերջինի համաձայն ՝ եթե որևէ կուսակցություն սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքում ստացել է 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին, ապա մյուս կուսակցություններն ստանում են այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ (ԼՄ), որ արդյունքում նրանց մանդատների ընդհանուր թիվը լինի Ազգային Ժողովի մանդատներ ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս: Յուրաքանչյուր կուսակցությանը հասանելիք լրացուցիչ մանդատների թիվը որոշվում է հետևյալ կերպ. այդ կուսակցության ստացած մանդատների թիվը բազմապատկվում է ԼՄ թվով, ստացված թիվը բաժանվում է լրացուցիչ մանդատներ ստացող կուսակցությունների՝ մինչև լրացուցիչ մանդատներ տալը ստացված մանդատների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք տվյալ կուսակցությանը հասանելիք լրացուցիչ մանդատների թվերն են: Մնացած մանդատները կուսակցության միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով: Մնացորդների մեծության հավասարության դեպքում վիճարկվող մանդատը տրվում է այն կուսակցությանը, որի մանդատների թիվն ամենամեծն է, իսկ դրանց հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ:

Կատարված հաշվարկների արդյունքում՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցության մանդատների ընդհանուր քանակը կազմել է 18:

Վերոգրյալը սահմանվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 16-ի 176-Ա թվակիր որոշմամբ:

Այնինչ, «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավորական մանդատներից մեկը կրող Արման Բաբաջանյանը 2019 թվականի սեպտեմբերի 10-ին դադարեցրել է իր անդամակցությունը «Լուսավոր Հայաստան» խմբակցությանը և դարձել որևէ խմբակցության կազմում չընդգրկված պատգամավոր», իսկ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը, փաստորեն, զրկվել է իրեն տրված 18 մանդատներից մեկից:

Վերլուծելով ստեղծված իրավիճակը և գործող իրավակարգավորումները՝ հանգում ենք հետևյալին՝

Ընտրական օրենսգրքի վերը նշված կարգավորումներն ինքնանպատակ չեն՝

Մանդատների 2/3-ը բաժին են հասնում իշխող քաղաքական ուժին, իսկ եթե այլ խմբակցությունների հետ մեծամասնություն հանդիսացող ուժը կոալիցիա չի ձևավորում (7-րդ գումարման Ազգային ժողովում իշխող խմբակցությունը դրա կարիքն էլ չի ունեցել), ապա սա նշանակում է, որ մնացյալ խմբակցություններն այս փաստի ուժով համարվում են ընդդիմադիր խմբակցություններ:

Այստեղ հիշատակման են ենթակա «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ «Կանոնակարգ») 7-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, որոնց համաձայն՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով մանդատների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 54%-ը ստացած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ քաղաքական կոալիցիայի անդամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցությունները ընդդիմադիր: Կառավարության կազմավորման վերաբերյալ հուշագիր ստորագրած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցություններինը՝ ընդդիմադիր: Ընդ որում, Կանոնակարգի 8-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով՝ ընդդիմադիր խմբակցությունն (այլ ոչ թե օրինակ ընդդիմադիր պատգամավորը կամ այլ սուբյեկտ) ունի Կանոնակարգով սահմանված գործունեության երաշխիքներ (ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված մեկ հարցի քննարկումը, մտքերի փոխանակության տևողությունը սահմանված լինելու դեպքում ընդդիմադիր և կառավարող խմբակցություններում ընդգրկված՝ հերթագրված պատգամավորների փոխառփոխ ելույթ ունենալու պայմանը, Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի թեկնածուի առաջադրումը միայն ընդդիմադիր խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորների թվից և այլն): Մեջբերման է արժանի նաև Կանոնակարգի 24-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, ըստ որի՝ քննիչ հանձնաժողովի նախագահ և տեղակալ կարող են լինել բացառապես խմբակցությունների անդամները:

Այսինքն, որևէ դեպքում խմբակցությունում չընդգրկված պատգամավորները չեն կարող համարվել խորհրդարանական ընդդիմություն՝ Ընտրական օրենսգրքի և Կանոնակարգի իմաստով: Այդ դերը վերապահված է բացառապես խմբակցություններին:

Մյուս կողմից, մանդատների առնվազն 1/3-ն ընդդիմադիր ուժերին սահմանադրական օրենքի ուժով վերապահելը միտված է հնարավորինս զսպելու կառավարող խմբակցությանը և գործադիր իշխանությանը: Ի վերջո, փոխզսպումների բաժանարար գիծը փաստացի անցնում է ոչ թե օրենսդիր և գործադիր իշխանությունների, այլ խորհրդարանի իշխանական և ընդդիմադիր քաղաքական միավորների՝ խմբակցությունների միջով: Ընդ որում, լրացուցիչ մանդատներ ստանում են ոչ թե անհատ պատգամավորները, այլ խորհրդարան անցած կուսակցությունները/դաշինքները: Այսինքն, 1/3 ընդդիմադիր թևը ձևավորվում է այդ ուժերից, այլ ոչ թե առանձին պատգամավորներից: Ըստ այդմ, խմբակցության կազմից դուրս եկած պատգամավորը չի կարող հաշվարկվել ընդդիմությանը հասանելիք 1/3 մանդատների թվում:

Եվ սա սահմանադրական իրավունքի տեսական մեկանաբանություն չէ, այլ սահմանադրի կամքով ամրագրված հստակ պահանջի՝ զսպման կառուցակարգերը գործնականում հնարավոր դարձնելու նորմ-երաշխիք: Այսպես՝

- Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի ձայներն են անհրաժեշտ պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի ստեղծման պահանջ ներկայացնելու համար (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ «Սահմանադրություն») 108-րդ հոդվածի 4-րդ մաս):

- Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի ձայներն են պետք վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային Ժովովի որոշման նախագիծ ներկայացնելու համար (Սահմանադրության 115-րդ հոդված):

- Վարչապետի թեկնածու առաջադրելու համար ևս անհրաժեշտ է պատգամավորների ընդհանուր թվի 1/3-ը (Սահմանադրության 115-րդ հոդվածի 1-ին մաս և 149-րդ հոդվածի 3-րդ մաս):

- Նույնկերպ, Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ը (Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընտրական օրենսդրության վերոնշյալ դրույթների այլ մեկնաբանման պարագայում «Լուսավոր Հայաստան» խմբակցության՝ Ընտրական օրենսգրքով նախատեսված երաշխիքներն են խախտվում» և գործնականում առաջանում է սահմանադրի կամքին տրամագծորեն հակառակ իրավիճակ:

Հարկ է նաև նշել, որ եթե պատգամավոր Արման Բաբաջանյանը վայր դներ մանդատը, ապա այն փոխանցվելու էր «Լուսավոր Հայաստան» կուսակցության ցուցակի հաջորդ համարի թեկնածուին:

Այսպիսով, ընդդիմադիր խմբակցության պատգամավորի՝ խմբակցության կազմից դուրս գալու և մանդատը վայր չդնելու որոշմամբ, խախտվում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված հարաբերակցությունն իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների միջև:

Այսպիսով, խորհրդարանի 1/3-ը պետք է լինի ընդդիմադիր, իսկ ընդդիմություն կարող են լինել բացառապես խմբակցությունները:

Ավելին, Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի (Մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում թվի համամասնությամբ:) և 108-րդ հոդվածի 2-րդ մասի (Քննիչ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:) հստակ տրամաբանությամբ՝ խմբակցության կազմից դուրս եկած

պատգամավորը չի կարող ընդգրկվել հանձնաժողովի կազմում, այդ թվում՝ լինել հանձնաժողովի նախագահ: Ակնհայտ է, որ սահմանադիրն ըստ էության չի նախատեսել խմբակցություններում չընդգրկված պատգամավորների ինստիտուտը՝ իր այս կարգավորումներով, քանի որ պատգամավորն իր գործունեության կարևոր մասն իրականացնում է խորհրդարանական հանձնաժողովներին անդամակցելով: Ժամանակավոր հանձնաժողովների մասով նույնակն կարգավորումներ է նախատեսում Կանոնակարգի 16-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հաշվի առնելով վերը շարադրյալը՝ խնդրում ենք սահմանված ընթացակարգով «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակի հաջորդ համարին տրամադրել պատգամավորական մանդատ՝ վերականգնելու համար խորհրդարանի իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների՝ սահմանադրական օրենքով նախատեսված հարաբերակցությունը»:

Քննարկվող դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել Ազգային Ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանի կողմից:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Դիմումով հարուցված վարչական վարույթով հրավիրված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին ներկայացել է «Լուսավոր Հայաստան» խմբակցության լիազոր ներկայացուցիչ Դ. Խաժակյանը՝ ներկայացնելով «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավարի կողմից 8.07.2020թ. տրված լիազորագիր:

Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման Ազգային ժողովը ձևավորվել է 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների արդյունքներով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 95-րդ հոդվածը սահմանում է Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն ամփոփելու կարգը: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հնարավոր որոշումների սպառիչ ցանկը, որոնցից մեկը պետք է ընդունվի ընտրությունների արդյունքների ամփոփմամբ: Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների արդյունքների ամփոփմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որոշումը՝ Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 176-Ա որոշմամբ սահմանվել է.

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընտրվել է և մանդատները բաշխվում են՝

1) Իմ քայլը դաշինք - 88 մանդատ.

2) «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն - 26 մանդատ.

3) «Լուսավոր Հայաստան» կուսակցություն - 18 մանդատ:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 176-Ա որոշումը չի վիճարկվել:

Ներկայացված դիմումով Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների արդյունքում կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև մանդատների բաշխումն Ընտրական օրենսգրքի կանոնակարգումների պահպանմամբ իրականացված լինելու հանգամանքը չի վիճարկվում:

Ներկայացված դիմումով իրավական վերլուծության են ենթարկվել Ընտրական օրենսգրքով սահմանված՝ Ազգային ժողովի մանդատների բաշխման կարգը, դրա կիրառման կառուցակարգերը, ինչպես նաև քաղաքական ուժերի որոշակի հարաբերակցության ապահովմանն ուղղված սահմանադրաիրավական կարգավորումները, որոնց արդյունքում ներկայացվել է պահանջ՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակի հաջորդ համարին տրամադրել պատգամավորական մանդատ՝ վերականգնելու համար խորհրդարանի իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների՝ սահմանադրական օրենքով նախատեսված հարաբերակցությունը:

Պատգամավորներին մանդատների տրամադրման կարգը սահմանված է Ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածով:

Ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներին մանդատների տրամադրումն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ՝ գրանցելով համապետական ընտրական ցուցակից և տարածքային ընտրական ցուցակից ընտրված Ազգային ժողովի պատգամավորներին:

Համապետական ընտրական ցուցակի առաջին և երկրորդ մասերից մանդատ ստացած թեկնածուն հանվում է տարածքային ընտրական ցուցակից, իսկ տարածքային ընտրական ցուցակից մանդատ ստացած թեկնածուն հանվում է համապետական ընտրական ցուցակի առաջին և երկրորդ մասերից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

2. Առաջին հերթին մանդատները տրամադրվում են տարածքային ընտրական ցուցակով ընտրված պատգամավորներին: Ընտրական տարածքում կուսակցությանը հասանելիք մանդատներն ստանում են տվյալ ընտրական տարածքին հասանելիք մանդատների թվին հավասար թվով այն թեկնածուները, որոնք ստացել են առավելագույն

կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Կողմ քվեարկված քվեաթերթիկների հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ: Եթե կուսակցության տվյալ ընտրական տարածքի ցուցակում չկան բավարար թվով թեկնածուներ, ապա թափուր մանդատները փոխանցվում են համապետական ընտրական ցուցակի առաջին մասին:

Երկրորդ հերթին մանդատները սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով տրամադրվում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

Երրորդ հերթին մանդատները տրամադրվում են կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին մասի թեկնածուներին՝ ըստ հերթականության: Եթե դրա արդյունքում կուսակցության բոլոր մանդատները բաժին են հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա վերջին թեկնածուն իր մանդատը զիջում է համապետական ընտրական ցուցակի առաջին մասի՝ չներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուին, եթե կա: Եթե կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուների թիվը փոքր է հասանելիք մանդատների թվից, ապա համապատասխան մանդատները մնում են թափուր:»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Տարածքային ընտրական ցուցակից մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության տվյալ տարածքային ընտրական ցուցակից առավելագույն ձայներ ստացած հաջորդ թեկնածուին: Ձայների հավասարության դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ: Եթե տվյալ տարածքային ընտրական ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը փոխանցվում է համապետական ընտրական ցուցակի առաջին մասին: Եթե համապետական ընտրական ցուցակի առաջին մասում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:

Համապետական ընտրական ցուցակի առաջին մասից մանդատից հրաժարված կամ պատգամավոր ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին մասի հերթական հաջորդ թեկնածուին, իսկ եթե դրա արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 25 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին մասի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա:

Եթե համապետական ընտրական ցուցակի առաջին մասում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:

Համապետական ընտրական ցուցակի երկրորդ մասից մանդատից հրաժարված կամ պատգամավոր ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության համապետական ընտրական ցուցակի երկրորդ մասի նույն ազգային փոքրամասնության ցուցակում նվազագույն համար ունեցող թեկնածուին, իսկ այդպիսին չլինելու դեպքում մանդատը մնում է թափուր:»:

Նշված իրավադրույթները կանոնակարգում են նաև Ազգային ժողով ընտրվելուց և մանդատների բաշխումն իրականացնելուց հետո՝ պատգամավոր ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը մեկ այլ թեկնածուի տրամադրելու կարգն ու ժամկետները:

Դիմումատուն ներկայացնում է պնդում առ այն, որ «ընդդիմադիր խմբակցության պատգամավորի՝ խմբակցության կազմից դուրս գալու և մանդատը վայր չդնելու որոշմամբ, խախտվում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված հարաբերակցությունն իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների միջև», ինչով էլ պայմանավորված դիմումով ներկայացվում է պահանջը՝ «սահմանված ընթացակարգով «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակի հաջորդ համարին տրամադրել պատգամավորական մանդատ՝ վերականգնելու համար խորհրդարանի իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների՝ սահմանադրական օրենքով նախատեսված հարաբերակցությունը»:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 1-ին մասի և Ընտրական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորների նվազագույն թիվ է սահմանված հարյուր մեկը:

Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորիներին հասանելիք մանդատները բաշխվել են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև՝ նրանցից յուրաքանչյուրին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն՝ Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորիներին հասանելիք մանդատների ընդհանուր թիվն արձանագրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 176-Ա որոշմամբ: Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ արդեն իսկ ընտրված Ազգային ժողովի և բաշխված մանդատների պայմաններում լրացուցիչ մանդատ տրամադրելու, ըստ էության, մանդատների բաշխման

արդյունքում ձևավորված մանդատների ընդհանուր թվի ավելացման լիազորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն օժտված չէ:

Վերը նշված իրավակարգավորումների վերլուծությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ կուսակցության տարածքային կամ համապետական ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ տրվում է ***լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը***, ինչը նշանակում է, որ եթե որևէ պատգամավորի լիազորություններ վաղաժամկետ դադարեցված չեն, ապա առկա չէ այն իրավաբանական փաստը, որի հիմքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր արձանագրությամբ ***այդ մանդատը*** կարող է տրամադրել մեկ այլ թեկնածուի: Այսինքն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մանդատ տրամադրելու լիազորությունը հնարավոր է իրականացնել բացառապես թափուր մանդատ առաջանալու դեպքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-րդ և 49-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանի դիմումը՝ մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**